Կարծիք

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդ

ՔԱՐԱՄՅԱՆ ԻՐԻՆԱ ԱՐԹՈՒՐԻ հեղինակած «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսության ընտրված թեման ժամանակակից իրականության ամենից արդիական ու կարևոր հիմնահարցերից է:

Ժամանակակից գլոբալ տեղեկատվական աշխարհում տեխնոլոգիական առաջընթացը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ցանցերը, տեղեկատվական-հաղորդակցային կապուղիները վերածվել են միջպետական ուժի կարևորագույն գործոնի, անհատական կյանքի որակի որոշման իրողության, քաղաքական և պետական կառավարման կարևոր գործիքի: Նման համեմտաբար նոր գործոնները հատկապես կարևոր են փոքր պետությունների համար, քանի որ նոր որակի ու բնույթի հնարավորություններ են բացում նրանց արդյունավետ կառավարման ու անվտանգության ապահովման համար:

Այս տեսանկյունից ներկայացվող ատենախոսության մեջ փորձ է արվել գիտական հետազոտության դիրքերից համապարփակ ուսումնասիրել տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ու քաղաքական կառավարման փոխկապակցվածության հարցերը՝ դրանք տեղայնացնելով ՀՀ-ի օրինակի վրա:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակը ատենախոսության առաջին՝ «Քաղաքական կառավարման մեջ հաղորդակցման գործընթացների ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմքերը» գլխում պատշաճ չափով ու ընդգրկունությամբ անդրադարձել է քննարկվող ու հետազոտվող հիմնահարցի տեսահայեցակարգային վերլուծության ամենատարբեր կողմերին: Մասնավորապես՝ քննարկվել է «տեխնոլոգիա», «քաղաքական տեխնոլոգիաներ» և «տեղեկատվական տեխնոլոգիաներ» հասկացությունները, դրանց փոխկապակցվածությունները: Վերլուծվել են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման զարգացումը և ընդլայնումը քաղաքական գործունեության մեջ, այդ թվում՝ կառավարման, ընտրական գործընթացների և էլեկտրոնային կառավարման հայեցակարգերի ներդրման մեջ: 1.2 ենթագլխում հեղինակը ներկայացրել է օտարերկրյա և հայրենական հետազոտողների աշխատանքներում «տեղեկատվական հասարակություն» հասկացության մեկնաբանման և էվոլյուցիայի հիմնական տեսական մոտեցումները, իսկ 1,3-ենթագլխում՝ հիմնավորել քաղաքական հաղորդակցության հիմնական դերը իշխանության, օրինականության և կառավարական որոշումների արդյունավետության ապահովման գործում՝ ընդգծելով հասարակական գիտակցության և զանգվածային վարքագծի վրա դրա ազդեցությունը:

Հեղինակը աշխատանքի երկրորդ՝ «Քաղաքական կառավարման մեջ հանրային գիտակցության վրա հաղորդակցական ազդեցության թվային գործիքները» գլխում անդրադարձել է ժամանակակից քաղաքական կառավարման համակարգում հանրային գիտակցության վրա հաղորդակցման թվային գործիքների ազդեցության վերլուծությանը: Գլխի առաջին ենթագլխում վերլուծել է «էլեկտրոնային ժողովրդավարություն» երևույթը՝ որպես քաղաքական գործընթացների թվայնացման արդյունք և տեղեկատվական հասարակության հիմնական դրսևորումներից մեկը: Երկրորդ ենթագլխում հեղինակը

կենտրոնացել է զանգվածային լսարանի վրա տեղեկատվության ազդեցության հիմնական մեխանիզմների, այդ թվում՝ ֆրեյմինգի, սոցիալական ցանցերի և բոտերի օգտագործման վրա:

Երրորդ՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանի քաղաքական գործընթացներում» գլխում հեղինակը դիտարկել է ՀՀ-ում քաղաքական կառավարման համակարգի բարեփոխման խնդիրները թվայնացման ներկա փուլում, ինչպես նաև վերլուծել տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի դերը Հայաստանում քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման ժամանակ: Գլխի առաջին ենթագլխում հեղինակը վերլուծության է ենթարկել Հայաստանի պետական կառավարման թվային վերափոխումը, որը ներառում է ռազմավարությունների մշակում և հանրային ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակների ներդրում: Երկրորդ ենթագլխում հեղինակը ընդգծել է տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կարևորությունը արագ արձագանքման ապահովման, ռեսուրսների մոբիլիզացման և սոցիալական կայունության պահպանման գործում:

Տպավորիչ է աշխատանքի պատրաստման ժամանակ հեղինակի կողմից օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկը:

Չնայած կատարված մեծ ու արդյունավետ հետազոտական աշխատանքին, ուսումնասիրության մեջ առկա են նաև որոշակի թերություններ ու բացթողումներ, մասնավորապես՝ մենք կկենտրոնանանք դրանցից մի քանիսի վրա:

1. Չնայած աշխատանքը կրում է «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» վերնագիրը, սակայն աշխատանքում որևէ անդրադարձ չկա «տեղեկատվական անվտանգության հայեցակարգ» հասկացության և ՀՀ տեղեկատվական հայեցակարգի թեմատիկային առհասարակ: Հիշեցնենք, որ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ կոչվող վերջին փաստաթուղթը մշակվել է 2017-ին Անվտանգության խորհրդի կողմից, որը սակայն շրջանառության մեջ այդպես էլ չի դրվել: Կարծում ենք, որ հեղինակը իր աշխատանքի 3.2 ենթագլխում որոշակի անդրադարձ պետք է կատարեր այս իրավիճակին, քանզի տեղեկատվական հաղորդակցային ներկա իրողությունների ու պետության քաղաքական կառավարման հետ անմիջականորեն կապված հիմնահարց է:

2.Հետազոտության 3.2՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը Հայաստանի քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման գործում» (59-81 էջեր) ենթագլուխում հեղինակը ՀՀ-ին անդրադառնում է միայն ենթագլխի 71-րդ էջում, իսկ հաջորդ անդրադարձը արդեն 77-80 էջերում է: Կարծում ենք, ՀՀ-ի հետ կապված գործնական փաստական տեղեկատվության համամասնությունը պետք է լիներ այլ՝ առավել գերակշռող բնույթի:

3.Հեղինակը աշխատանքի գիտական նորույթների մեջ նշում է, որ «Հստակեցվում է «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը՝ հաշվի առնելով ժամանակակից քաղաքական կառավարման առանձնահատկությունները, բացահայտվում են դրա՝ որպես պետության և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցության նոր ուղիներ ձևավորող սոցիալ-տեխնիկական համակարգի բնորոշ գծերը»: Ինչպես օտարերկրյա, այնպես էլ արդեն հայրենական գիտական հետազոտություններում «տեղեկատվական հասարակություն» հասկացության գոյության, բնույթի, նոր տրանսֆորմացիաների գրեթե բոլոր ասպեկտները, դրսևորումները, ձևերը այս կամ այն չափով դարձել են ամենատարբեր հետազոտությունների, զեկույցների, գիտական հոդվածների նյութ, հետևաբար ես ձեռնպահ կմնայի տեղեկատվական հասարակություն հասկացության հստակեցում գիտական նորույթ դիտարկելուց:

Չնայած մեր՝ վերոնշյալ դիտարկումներին, կարծում ենք, որ հեղինակը կատարել է ահռելի աշխատանք, օգտագործել պատշաճ գիտական և հետազոտական գործիքակազմ, ուսումնասիրության արդյունքում հանգել է կարևոր եզրակացությունների, հետևաբար արժանի է հայցվող գիտական կոչմանը:

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի

Քաղաքագիտության ամբիոնի դեցենտ, բ.գ.թ. Ա.Ղևոնդյան

01.02.2026

Հասկանում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար,

բ.գ.թ., դոցենտ

Մեկ.թ. Գ. Գոմիսարյան